

ԱՐԻՆԳ

ԵՐԱԽԱՅՐԻՔ

1882-1887

1-4

Ա. Ս.

47713

47714

47715

29549

ԵՐԱԽԱՅՐԻՔ

1882—1887

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԵՐՐՈՐԻ ԳԻՐԳ—ԱՇՈՒՆ



1888

ԵՐԱԽԱՅՐԻՔ

1882—1887

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ — ԱՇՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՄՍԱՐ Ա. Մ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍ

1888

Մ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ



44414

Дозволено цензурою. 7-го Юня 1888 года, г. Тифлисъ.

ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ



 'վ, ամենաբարի Արարիչ,
Աղաչում ենք մաքուր սրտով,
Տո՛ւր աշխարհիս առատութիւն՝
Պատունասից ազատելով:

Յուսանատին մի ճանապարհ
Յույց տուր դիւրին ու ապահով,
Որ նա գործով միշտ զբաղուի,
Ապրի արդար իր վաստակով:

Խեղճ աղքատի դուռը բացիր,
Նա զրկուած է այս աշխարհում.
Իսկ զրկողին գովթ պարգևիր,
Լցրո՛ւ աչքը անկշտում...

Երկրագործի աշխատանքը
Չարիքներից ազատ պահի.
Նրա գործը բարեխիղճ է
Եւ արդիւնք իր սուրբ քրտնքի:

Ո՛հ, լսիր մեզ, ով Արարիչ,
Պաղատում ենք մեր սուրբ բերնով.
Չարը խեղդիր,—բարին ծաղկի,—
Աշխարհքս լցրու բարիքներով...

1887

ԳՈՂՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔ

 մբատի համար սովորական էր տնային
գողութիւններով պարապելը: Եւ վար-
մանային աչն է, որ ամեն անգամ նրան յա-
ջողվում էր մի բան գողանալ և վաճել: Այս
գուցէ նրանից էր, որ նա շատ վարպետութեամբ
էր իր գործը կատարում:

Մի առաւօտ Սմբատը մտնելով տուն, տե-
սաւ որ իր մայրը թաժալ հաց է թխել. իս-
կոյն մի միտք յղացաւ նրա գլխում:

—Այս լա՛ւ է, բացագանչեց նա. պահա-
րանում իւղ կալ պահած, կարծեմ, հիւրերի
համար: Կը գողանամ բաւականին, կը քսեմ
թաժալ հացի վրայ և անուշ կանեմ: Մի՞թէ
հիւրերն ինձանից լաւ ախորժակ կունենան,
կամ թէ չէ նրանք ինձանից լաւ մարդ ե՞ն...

Եւ նա չուտով բացեց պահարանը, ինչպէս
ստաց, աչնպէս էլ արաւ. բաց նրա բախտից
մայրը վրահասաւ: Սմբատը աճապարելով նա-
խաճաչիկը կոխեց գլխարկի տակը և երկու
ձեռքով գլխարկը ամուր սեղմեց գլխին, որ
մայրը չը հասկանալ բանի էութիւնը: Եւ ճիշտ
նա ոչինչ չը նկատեց:

Պէտք է ասած, որ հացը փոքր ինչ տաք էր. սրա ազդեցութիւնից հալուեց իւղը և ըսկըսեց ծլծլալ Սմբատի երեսով: Մայրը տեսաւ այս, և կարծելով քրտինք է, ասաց.

—Այդ ի՞նչ է, որդեա՛կ... սրբիր փեշովս երեսիդ քրտինքը...

—Չէ, չէ, մայրիկ, շատ եմ խաղացել, էնդուր եմ քրտնել... ես լետոյ կը սրբեմ, իսկոյն վրաբերեց Սմբատը սքրթնած և տեղից չը շարժուելով:

Մայրը հարկաւոր գործի ետեւից դուրս գնաց. մնաց Սմբատը: Սա հանեց գլխարկի տակից նախաճաշիկը և սկսեց ուտել: Եւ կարծելով թէ «հրէս» մայրը կը գայ, կ'իմանայ և կը ծեծի, սկսեց այնպէս մեծ-մեծ պատառներ դնել, որ մի պատառը «կատիկը թռաւ» — շքնշափողն ընկաւ: Նա խեղդուելով, երեսը կարմրած կոշտ հաղից, աչքերն արտասուքով լրցուած՝ հաղիւ կարողացաւ ասել.

—Վա՛յ... հա՛... հա՛... ըամ... լինի հա՛... թի՛ւհ... թի՛ւհ... թի՛ւհ... և նա շնչասպառ ընկաւ գետնին:

Տանեցիները վրահասնելով, հաղիւ կարողացան մի կուծ ջրով ուշքի բերել տանու գողին...

Ք Ա Մ Ի



ատանվում են ծառերը
Զօրեղ քամու փշուածքից,
Կոտրատվում են ճղները
Զրկվում իրանց մայր ծառից:

Թող ու աւազ երկինք է
Բարձրացնում ու տանում,
Եւ կամ գետնին չըջելով
Մարդկանց աչքեր կուրացնում:

Քանդւթնդում է դէզերը
Խոտը խլում փչացնում,
Շառաչելով տանիքից
Տախտակ պոկում, չալրտում:

Կտրուել է անց ու դարձը,
Տանից ոչ ոք դուրս չի գալիս,
Քար, հող, աւազ — ամեն բան՝
Մարդի գլխով է տալիս:

Վախում է սաստկագին,
Գոռում, գոչում, բարկանում,
Մէկ երեխայի պէս լացում,
Իբր գազան բառաչում:

Ոչ մի արգելք չի կարում
Նրա ուժին դիմադրել,
Վզվզում է սոսկալի,
Փշրում ամենն անարգել:

Ամենայն ինչ սարսափած
Ծալծլվում է, ոլորվում,
Քամու անգութ հարուածից
Ազատուել է աշխատում...

Միայն անյաղթ երկիրն է
Իր գոռ կուրծքը դէմ արել,
Այդ քամիները միմիայն
Նրա ծիծաղն են շարժել...

1886

ՄԱՐԴԸ

ՀԻՆ ԶՐՈՅՑ

Ա.



ենդանիների թագաւոր հզօր առիւծը մի
անգամ պատահելով իր ազգակից կատուին՝
չատ զարմացաւ, որ նա բոլորովին իրան նման
է, միայն սաստիկ նուազ է ու փոքր: Նա ցան-
կացաւ դրա պատճառն իմանալ, ուստի և ասաց.

— Ազգակից եղբայր, ես զարմացած եմ
քեզ վրայ: Դու սաստիկ նման ես մեր ցեղին,
սակայն շատ փոքր ես:

— Մեծ արքայ, ճիշտ է ձեր նկատողու-
թիւնը, պատասխանեց կատուն. մենք ձեր ցե-
ղիցն ենք, բայց մեր տէրը՝ որին մարդ են
ասում, դարերի ընթացքում մեր սերնդին աչ-
քան զանաւարել է, որ մեր ցեղը հետզհետէ
նուազել, փոքրացել է:

— Բայց մի՞թէ դուք չէիք կարողանում
վրէժխնդիր լինել. և ինչո՞ւ այդքան համբե-
րում էիք. ձեր արքայական անունը ինչո՞ւ ու-
տի տակ էք տալիս, մի՞թէ ձեր մէջ ոգի չը կայ:

— Մեր սրտի մէջ այժմ էլ աներկիւղ ոգի կայ,
և մենք շատ ենք ընդդիմացել մարդին, սակայն
մարդը, օ՛, մարդը մեզանից խորագէտ է. նա
յաղթեց մեզ ամեն դէպքում: Աշխարհիս երե-

սին մի բան չենք տեսնում, որ ընդդիմանար մարդին և յաղթանակը տանէր: Ամեն բան խոնարհվում է նրա հանճարի առաջ. նա անյաղթ է...

— Այնուամենայնիւ ձեր վարմունքը պախարակելի է: Արքայական զարմին վիզ ձկել՝ խորին նախատինքի է արժանի, գոռաց առիւծը:

— Այդ ճիշտ է, բայց... բայց, մեծ արքայ, մեր բոլոր ուժերն ապարդիւն անցան. հէնց այդ ընդդիմութեան համար ծեծ կերանք, որ այսպէս նուազ մնացինք: Մեզանից մի քանիսը, այո՛, չը համբերեցին և մարդկային բնակութիւնից հեռու փախան. այժմ նրանք անտառներում են բնակվում, բայց մարդիկ նրանց էլ հանգիստ չեն թողնում, և որոգայթով ու արիւնդուշտ հրացանով շատերին սպանում են:

— Ես խորհուրդ կը տալի բոլորդ էլ նրանց օրինակին հետևէիք. լաւ է մեռնել հրացանով, քան այսպէս թշուառ ապրել, որոտաց առիւծը վճռողապէս:

Կատուն լուեց, որովհետև առիւծի ասածի մէջ ճշմարտութիւններ կային. բայց նա կամենում էր առիւծին գործով ցոյց տալ մարդի խորագիտութիւնը, ուստի և ասաց.

— Հզօր արքայ, եթէ կամենում էք մարդ արարածը տեսնել և նրա հետ ձեր ուժը փորձել, — ահա՛ անտառի մօտ նա փայտ է կրտրում, հետը մրցեցէք՝ ինչով կուղէք:

Բ.

Առիւծը վեհափառ բաշը թափ տալով և հպարտ-հպարտ քայլուածքով մօտակայ անտառը դիմեց: Նա հեռուից տեսաւ մարդին, որ տապարով ահագին գերանը միջից ձեղքում էր: Նրա ծիծաղն եկաւ, երբ մարդին ոտից գլուխ դիտեց. ուզում էր ձէտի մի հարուածով նրան գետնին հաւասարեցնէր, բայց փետոյ մը տածեց, որ այդ փոքրագութիւն կը լինի: Այդ ժամանակ յանդուգն մարդը արդէն պատրաստուել էր տապարով առիւծի գլուխը ձեղքելու, երբ վերջինս գանչեց. «Սպասի՛ր»...

Մարդը տապարը ձեռքից վայր դրեց և յորդառատ քրտինքը սրբելով հարցրեց.

— Ի՞նչ ես կամենում, ա՛յ առիւծ...

Առիւծի սիրտը եփ եկաւ, որ իրան արքայ անունը չը տուեց, բայց կրկին համբերեց, նրան փառս չը տուաւ:

— Եկայ, խրոխտաբար խօսեց առիւծը, — ձեր ուժն ու խելքը փորձելու, որ տեսնեմ դուք մի բանի նմա՞ն էք, որ ամենքն էլ ձեր առաջ խոնարհվում են: Մանաւանդ մեր ազգակից կատուների պատիւը ոտի տակ էք տուել, ստրկացրել... Այդ անպատուութիւնը մեզ էլ է վերաբերում, ուստի եկայ նրանց վրէժը լուծելու: Ես կենդանիների թագաւոր քաջայաղթ առիւծն եմ, լա՛ւ խմացիր և բերանդ մաքուր

պահիր ինձ հետ խօսելիս: Ձեր մասին շատ մեծ համբաւներ եմ լսել, որ դուք խելօք ու կորովամիտ էք. ե՛կ, ինչով կուզես մարտնչենք, եթէ դո՛ւ—որ շատ հաւանական է—յաղթուեցար, իմացած լինիս, որ պատառ-պատառ պիտի անեմ...

—Շատ լաւ, առիւծ արքայ.... ես պատրաստ եմ, պատասխանեց մարդը, որ ոգևորուած առիւծի ճառը լսելիս՝ արդէն իր ծրագիրը կազմում էր նրան յաղթելու համար:

—Ահա՛ գործս վերջանալու վրայ է, շարունակեց նա. եթէ կամենում էք աւելի շուտով վերջանալ, դուք էլ օգնեցէք, մանաւանդ որ մեծ ուժ է հարկաւոր և ես դեռ շատ պիտի չարչարուեմ: Ես կամենում եմ այս գերանը ձեռքել. ահա ձեռքն արդէն բացուած է. ձեր երկու հզօր թաթերով ձեռքեցէք գերանը, իսկ ես, մեծ արքայ, միւս կողմից իմ տապարով կըխփեմ ձեռքի մէջ մտած ամուր սեպին, որ գերանը երկու մաս անենք: Ինձ այսքան է միայն հարկաւոր:

Առիւծը նուաստութիւն չր համարեց այդ պաշտօնը, որովհետեւ նրանով երևան պիտի գար իր ուժի առաւելութիւնը: Նա մռնչալով իր երկու զօրեղ թաթերը դրեց գերանի ձեռքի մէջ, և սկսեց գերանը երկու մաս բաժանելու համար իր բոլոր ուժը գործ դնել:

Խորամանկ մարդը, որ հէնց այդ բանին էր սպասում, այնպէս վարպետութեամբ հարուած տուեց ձեռքի մէջ մտած սեպին, որ սեպը դուրս պրծաւ, և ձեռքուածը կրկին սեղմուելով՝ իր մէջ թողեց առիւծի թաթերը: Առիւծը ուժգին ցաւից որոտաց և բոլոր ուժը գործ դրեց թաթերը հանելու:

Սակայն այդ անհնարին էր: Հէնց այդ միջոցին վրահասաւ մարդը և տապարով ըսկըսեց գանահարել առիւծի գլուխը: Առիւծը գոռում, գոչում էր. զօրեղ ձէտը գետնին խրփելով դղրդացնում էր անտառը. իսկ մարդը աներկիւղ շարունակում էր գանահարութիւնը: Էլ ուժ չր մնաց առիւծի մէջ. ուշաթափուեց և մնաց ողորմելի կերպով գլուխը քարշ արած գերանի վրայ: Մարդը տեսնելով որ եթէ մինչև անգամ առիւծը կենդանի էլ լինի՝ չի կարող ոչինչ անել, տապարով կրկին սեպը մտցրեց գերանի մէջ, և ձեռքը բացուելով՝ առիւծի թաթերը դուրս եկան նրա միջից: Առիւծն անզգալ ընկաւ գետնին. նա բերանը բաց ու խուփ էր անում: Մի ժամից լետուի նա խելագարի պէս վերկացաւ և գլոր-գլոր գալով, թաւալուելով սկսեց փախչել մարդից...

Մարդը հանգիստ թողեց նրան և կրկին սկսեց իր գործը շարունակել:

Ո Ր Բ



ունի հագուստ, չունի տուն,
Թափառում է որբ տղան.

Ո՞վ է խեղճին սփոփում,

Ո՞վ է կերակրում նրան:

Օրերով նա ընկած է

Սրա-նրա դռներին.

Հայր-մայր չունի, քույր չունի,

Ո՞ւմ պատմէ վիշտն իր սրտին:

Նա անտէր է, նա որբ է,

Ո՞վ կը լինի պահապան.

Ո՞րտեղ դնէ գլուխը,

Կը տա՞ն նրան օթեւան:

Թափառում է դէս ու դէն

Ոտաբորիկ, անօթի.

Սարսուռ է մարմինը,

Ա՛խ, ասացէք, ի՞նչ անի...

Գարուն, ամառ սահեցին,

Եկաւ աշուն խստագին.

Եւ սաստկաշունչ ձմեռը

Վհատեցնում խեղճովին...

«Հայրի՛կ, մայրի՛կ», լալագին

Միշտ կանչում է խղճովին.

Հեկեկոցն օդն է թնդացնում,

Եւ այդ ոչ ոք չէ լսում...

— Եղբայր, մենք քո վատը չենք կամենում, այլ ասում ենք զուր ես դուրս եկել այսպիսի ժամանակում:

— Լա՛ւ, լա՛ւ, ձեզ մի արդարացնէք, ձեր միտքը հասկանում եմ:

Այդ միջոցին մի անստուն հէնց կամենում էր նրան բերանը գցի՝ ուտի, բայց տիրոջ ճիպոտը դիպչելով կողքին՝ «կղճորեց» անցաւ: Խեղճ բոյսի գլուխը տափից կը պաւ. նա չարչարուեց, որ գլուխը բարձրացնի, չկարողացաւ:

— Ա՛յ թէ ջախջախուեց մեր հպարտի գլուխը հա, տասցին ծիծաղելով սերմնահատիկները:

Բոյսը բարկութիւնից ուզում էր միջից ճաքի. նա մի քանի անգամ աշխատեց, որ գլուխը բարձրացնի՝ չը կարողացաւ. վերջին անգամ ոյժը հաւաքեց և ոտի կանգնեց... բայց խեղճը գլխից զրկուեցաւ. նրա գլուխը մնաց գետնում:

— Ե՛լ չը խօսաս, անգլուխ եղբայր, ձայնդ փորդ է ընկել, սկսեցին հրհռալ սերմնահատիկները:

Եւ ճիշտ, խեղճ բոյսը ոչինչ չը կարողացաւ ասել, այլ ոտով, ձեռով էր անում թէ՛ սպասեցէք, ձեր պատասխանը շուտով կը ստանաք:

Սրւը բարձրացաւ և տաքացրեց խոնաւ գետինը: Կարճ միջոցում հպարտը՝ գլուխ ստացաւ և ասաց.

— Վերջապէս ազատուեցայ, քաջ եմ, թէ չէ. կարծում էիք հոգիս իսկույն կ'աւանդէի, ձեզ նման թուլասիրտ չեմ...

Սերմնահատիկները լաւ համարեցին լուել, քան կըրկին վիճաբանութեան մէջ մտնել նրա հետ: Նրանք գիտէին, որ այդ հպարտի վերջը մօտեցել է:

Օրերը քանի գնացին, ցրտեցին, բոլոր դալար տունկերը սկսեցին դեղնել: Մեր հպարտ բոյսը քաջութեամբ կռվում էր ցրտի հետ. նա աչքերը խուփ արաւ, մտաւ.

44414

չոր տունների արանքը, և աշխատում էր տաք տեղ գտնելու իր համար, բայց քամին գտաւ նրան, կոխեց իր թոյնալից ցրտութիւնը նրա մէջ և անշնչացրեց:

Նրա հետ վիճող սերմնահատիկները վաղուց խորը քնել էին և զարնանը զարթնելով՝ նկատեցին հպարտ բոյսի ցրտահար և չորացած մատղաշ ցողունը...

«Հպարտների և անժամանակ աճողների վերջը միշտ ալգպէս է լինում», ասացին նրանք և ապա գլուխները հանեցին հողի տակից...

1885

ԱՅՆԱՆ ՏԵՐԵԻ



Եղնել է աշնան տերև
Անզգայ ընկել գետնին,
Եւ մտածում է երկար՝
Յիշում իր կեանքը նախկին:

Նա յիշում է որ ինչպէս
Կոկոնի մէջ պառկած էր,
Եւ զմալած աչերով
Լոյս աշխարհը դիտում էր:

Անցան մի քանի օրեր,
Օրերը շատ տաքացան,
Գլխիկը նա դուրս հանեց,
Եւ ճեղքուեց նրա պատեան:

Վայելեց զարնան քաղցր
Մեղմ օրերն ու առաւօտ,
Շնչեց նոր ծաղիկների
Բուրմունքը անուշահոտ:

Շուտով հասան ամառնային
Երջանիկ, ուրախ օրեր,
Տերևը ստուերի տակ
Մեղմ կերպով օրօրվում էր:

Բայց ահա եկաւ աշուն,
Նա գեղնեց ու գալկացաւ,
Իր ոյժից ընկաւ, զրկուեց,
Քամին փչեց—գետնին ընկաւ:

Գիտէ որ կը գայ ձմեռ
Յուրա ձիւնով աշխարհ ծածկի,
Եւ ինքը վաղ կամ շուտով
Հող կը գառնայ, կը կորչի...

Եւ ահա յուսակտուր
Ընկել է խոնաւ գետնին,
Հառաչում է խեղճիկը
Սպասում իր վախճանին...

1886

ՈՍԿԻ ԵՒ ԿՐԱԿ



ի տան պատշգամում, բազկաթոռի մէջ,
նստել էր ծերունի Յովհաննէսը և նա-
յում էր դէպի փողոցը: Այդ բոլորին տարուայ այն ժա-
մանակն էր, երբ օրերը մի փոքր ցրտելով՝ ամառանոց
գնացած ժողովուրդը վերադառնում էր քաղաք: Գուցէ
նա երկար գիտէր ժողովրդի խռնվումը, եթէ իր թո-
ռը՝ նաշխուն Վարսենիկը չը խանգարէր նրան: Թոռան
երեւալով՝ իսկոյն նրա լերկ և կնճռոտ դէմքը փայլեց
ուրախութիւնով: Նա գրկեց Վարսենիկին և համբուրեց
նրա փափլիկ թշերից:

— Պապի, չէ՞ որ երէկ խոստացար ինձ համար մի
զրոյց պատմելու, ասաց աշխոյժ թոռը:

— Ձէ, չեմ յիշում:

— Ինչպէս չես յիշում. մինչև անգամ դրա համար
ինձանից մի պաչ... պահանջեցիր և... ես տուի:

— Հա, հա, այժմ միտս եկաւ: Բայց ես հիմա ու-
զում եմ մի ուրիշ լաւ բան պատմել. լսիր ուշադրու-
թիւնով: Գու գիտես Մովսէս Մարգարէի պատմութիւնը:

— Լաւ:

— Դէ մի պատմիր տեսնեմ՝ լաւ ես գիտում:

Վարսենիկը պատմեց:

— Ա՛յ շատ լաւ, սիրուն-ջան: Հիմա ես ուզում եմ քեզ
այնպիսի բան պատմել Մովսէսի մասին, որ դու չը գիտես:

— Դէ պատմիր, ասաց Վարսենիկն անհամբերու-
թեամբ, որ ուզում էր իմանայ թէ այդ ի՞նչպէս բան
է, որ զրքումը չը կայ և ուսումնարանում իրան չեն
սովորացրել:

—Երբ մանուկ Մովսէսին հանում են ջրից և տանում Եգիպտոսի Փարաոնի մօտ, — սկսեց ծերունին, — երեխան վրայ է ընկնում և բռնում նրա մօրուքից: Փարաոնը դրա վրայ շատ զարմանում է, և երազահաններին դիմելով իմանում է նրանցից, որ այդ երեխան իրան վնասակար է և պէտք է շուտով ոչնչացնել, բայց գտնվում են մի քանի բարի մարդիկ, որոնք ասում են Փարաոնին. «Թագաւորն ապրած կենալ, սխալ է այդ կարծիքը. նա երեխայ է, ի՞նչ է հասկանում. կուզէք «ոսկի և կրակ» բերէք և դնենք երեխայի առաջ, եթէ նա ոսկուց բռնի՝ իրաւացի է այդ բացատրութիւնը, իսկ եթէ կրակից — նշանակում է զուր է այդպիսի կարծիք տանելը և երեխային մի ոչնչացնէք»: Փարաոնը հրամայում է դրանց ասածը կատարել: Հէնց որ երկու առանձին ավսէի մէջ բերում են ոսկի և կրակ, երեխան վրայ է թռչում և «յափռում» մի բռուն կրակ: Հազիւ կարողանում են լացող երեխային սուս կացնել, որովհետեւ նրա ձեռները կրակն այրել էր: Գրանից Փարաոնը իմանում է, որ երեխան միշտ արտաքին փայլին է նայում և ոչ ներքին արժանաւորութեան, ուստի և երեխային չէ ոչնչացնում: — Իսկ ես, Վարսենիկ-ջան, ընդհակառակն, այդ բանի մէջ տեսնում եմ դարձեալ մանուկ Մովսէսի խելօքութիւնը:

— Ի՞նչպէս:

— Կրակը հարկւր անգամ թանկ է մեզ համար և կարեւոր, քան ոսկին:

— Վա՛, վա՛, ի՞նչ ես ասում, պապի, կրակը ի՞նչ է՞ ոչինչ է...

— Սպասիր, սպասիր, օրինակով քեզ հասկացնեմ: Մի՞թէ կարելի է առանց կրակի ապրել:

— Ա՛յ:



~~Երբ մանուկ Մովսէսին հանում են ջրից և տանում Եգիպտոսի Փարաոնի մօտ, — սկսեց ծերունին, — երեխան վրայ է ընկնում և բռնում նրա մօրուքից: Փարաոնը դրա վրայ շատ զարմանում է, և երազահաններին դիմելով իմանում է նրանցից, որ այդ երեխան իրան վնասակար է և պէտք է շուտով ոչնչացնել, բայց գտնվում են մի քանի բարի մարդիկ, որոնք ասում են Փարաոնին. «Թագաւորն ապրած կենալ, սխալ է այդ կարծիքը. նա երեխայ է, ի՞նչ է հասկանում. կուզէք «ոսկի և կրակ» բերէք և դնենք երեխայի առաջ, եթէ նա ոսկուց բռնի՝ իրաւացի է այդ բացատրութիւնը, իսկ եթէ կրակից — նշանակում է զուր է այդպիսի կարծիք տանելը և երեխային մի ոչնչացնէք»: Փարաոնը հրամայում է դրանց ասածը կատարել: Հէնց որ երկու առանձին ավսէի մէջ բերում են ոսկի և կրակ, երեխան վրայ է թռչում և «յափռում» մի բռուն կրակ: Հազիւ կարողանում են լացող երեխային սուս կացնել, որովհետեւ նրա ձեռները կրակն այրել էր: Գրանից Փարաոնը իմանում է, որ երեխան միշտ արտաքին փայլին է նայում և ոչ ներքին արժանաւորութեան, ուստի և երեխային չէ ոչնչացնում: — Իսկ ես, Վարսենիկ-ջան, ընդհակառակն, այդ բանի մէջ տեսնում եմ դարձեալ մանուկ Մովսէսի խելօքութիւնը:~~

Երբ մանուկ Մովսէսին հանում են ջրից և տանում Եգիպտոսի Փարաոնի մօտ, — սկսեց ծերունին, — երեխան վրայ է ընկնում և բռնում նրա մօրուքից: Փարաոնը դրա վրայ շատ զարմանում է, և երազահաններին դիմելով իմանում է նրանցից, որ այդ երեխան իրան վնասակար է և պէտք է շուտով ոչնչացնել, բայց գտնվում են մի քանի բարի մարդիկ, որոնք ասում են Փարաոնին. «Թագաւորն ապրած կենալ, սխալ է այդ կարծիքը. նա երեխայ է, ի՞նչ է հասկանում. կուզէք «ոսկի և կրակ» բերէք և դնենք երեխայի առաջ, եթէ նա ոսկուց բռնի՝ իրաւացի է այդ բացատրութիւնը, իսկ եթէ կրակից — նշանակում է զուր է այդպիսի կարծիք տանելը և երեխային մի ոչնչացնէք»: Փարաոնը հրամայում է դրանց ասածը կատարել: Հէնց որ երկու առանձին ավսէի մէջ բերում են ոսկի և կրակ, երեխան վրայ է թռչում և «յափռում» մի բռուն կրակ: Հազիւ կարողանում են լացող երեխային սուս կացնել, որովհետեւ նրա ձեռները կրակն այրել էր: Գրանից Փարաոնը իմանում է, որ երեխան միշտ արտաքին փայլին է նայում և ոչ ներքին արժանաւորութեան, ուստի և երեխային չէ ոչնչացնում: — Իսկ ես, Վարսենիկ-ջան, ընդհակառակն, այդ բանի մէջ տեսնում եմ դարձեալ մանուկ Մովսէսի խելօքութիւնը:

—Շատ լաւ. հիմա նայիր, ի՞նչ կը լինէր աշխարհիս դրութիւնը՝ եթէ կրակ չը լինէր. նա մի մուլթ մարմընի կը նմանուէր, որովհետեւ արեգակը նոյնպէս վառ կրակ է, գիտես: Եթէ արեգակ չը լինէր՝ այն ժամանակ ոչ խոտ կը լինէր, ոչ անասուն և ոչ էլ մարդ:

—Բայց ախր կրակի համար մենք նեղութիւն չենք քաշում, պատասխանեց Վարսենիկը մտածելով, — իսկ ոսկու համար ամեն մարդ աշխատում է, տանջվում է որ ձեռք բերի, որովհետեւ ամենից կարևորն է...

—Սլոգ շատ ճշմարիտ է, ապրեմ. բայց եթէ կրակ չը լինի, ի՞նչպէս կը շինեն տներ, մեքենաներ, գործիքներ և համարեա ամեն բան, ինչ մեզ հարկաւոր է:

—Ոսկով կառնէինք ու կը շինէինք, ինչ որ ասես՝ ոսկով կարելի է առնել, իսկ առանց կրակի շատ բան կարելի է անել:

—Ե՛՛ է՛ է... մի քիչ համբերիր: Պիտի իմանաս, որ առանց ոսկու շատ լաւ կարելի է ապրել. հին ժամանակներն ոսկով չէին առևտուր անում, այլ փոխատուութեամբ: Այսպէս՝ եթէ մէկն ունենում էր բուրդ, տալիս էր ուրիշին և նրա փոխարէն ստանում էր իրան, կարևոր մի որ և է բան: Եթէ մէկը մի առարկայից շատ ունէր և իրան հարկաւոր չէր, տալիս էր ուրիշին և ստանում այն՝ ինչ իրան հարկաւոր էր և նրան աւելորդ: Ես քեզ կը կարգամ անգլիացի Ռօբինզօն Կրիզոյի պատմութիւնը՝ թէ ինչպէս մի երիտասարդ առանց ոսկու կարևորութեան մի կղզում երկար ապրեցաւ, իսկ կրակով շատ բաներ և իրան հարկաւոր ամեն ինչ պատրաստեց: — Հիմա մի ուրիշ օրինակ բերեմ. պատահեց որ դու կամ հայրդ, կամ ես ընկանք մի անապատ տեղ. սարսափելի ցուրտ է և սրսուռ, այնպէս որ մարդ մի քանի ժամում կարող է սառել: Սեր գրպանները լիքն են ոսկով

արծաթով. քեզ եմ ասում, թնչպէս կարող ենք ցրտից ազատուել, երբ մեր ձեռներին չունենք մի բան, որով կարելի լինի կրակ անել: Այդպիսի դէպքում ի հարկէ մարդ կ'ոչնչանալ իր ոսկիներով: Բայց եթէ ունենանք կրակ, շուտով փայտեր վրայ կը տանք, ահագին խաւով կը գոյանայ, և մենք ազատ կը մնանք ցրտից...

—Այո, կրկին սկսեց ծերունին,—կրակը հեշտ է ճարվում, ամենքն էլ ձրիաբար կարող են ունենալ, և հէնց դրա մէջն է նրա արժանիքը, որ թանկ և ամենից հարկաւոր բանն է, բայց ձրի է... Ոսկին կրակի արժանաւորութեան մօտ ոչինչ է...

Ծերունին վերջացրեց իր պատմութիւնը և սկսեց հարցական կերպով նայել իր թոռանը, որ այդ րոպէին լուրջ կերպարանք էր ընդունել: Թոռն աշխատում էր ըմբռնել թէ՛ միթէ այդ բանը կարող է ուղիղ լինել, և կարծես հետզհետէ նրա մտքում ոսկու արժանաւորութիւնը չքանում էր կրակի արժանաւորութեան առաջ...

1886

ԾԻԾԵՌՆԱԿ



Ծիծեռնակը ցնծում է
Թւին խփում ճռուողում,
Երբ անմոռաց, հին բոյնը
Անվնաս է գտանում:

Ծիծեռնակը ժպտում է
Սաղմոս կարգում Աստուծուն,
Երբ նախշունիկ ձուերը
Միշտ ապահով են մնում:

Ծիծեռնակը պաշում է
Իր գիրկն առնում, օրօրում,
Երբ քնքուշիկ ձագերը
Լոյս աշխարհ են դնում:

Ծիծեռնակը թռչում է
Սարից, դաշտից մթեղներ
Կտցում, բերում շտապով
Եւ կերակրում իր ձագեր:

Ծիծեռնակը խտտում է
Ծնողի պէս ման ածում,
Երբ անհանգիստ ձագերը
Օդը ճեղքել են ուղում:

Ծիծեռնակը հսկում է
Տանում սար, ձոր սովրացնում,
Երբ շահացած ձագերը
Որսի ետնից են ընկնում:

Ծիծեռնակը լալիս է
Արցունք թափում, մղկտում,
Երբ անողորմ թշնամին
Աշխատանքն է փչացնում:

Ծիծեռնակը մեռնում է
Աչքերն փակում յաւիտեան,
Երբ անգութը չի խղճում,
Խփում սպանում է նրան...

Ծիծեռնակը ցաւում է
Դառն վշտերով այրվում,
Երբ հայրենիքից հեռու՝
Օտար երկրում է շունչ փչում...

1887



ԹԻԹԵՌՆԵՐ

ԱՌԱՆԴՈՒԹԻՒՆ

Ա.



Երկուցեան պարապ նստած էի ճրագի առաջին չափից դուրս յողնած լինելով՝ շուտ-շուտ յորանջում էի և դլուխս դէս ու դէն թեքում: Երևի շուտով կը քնէի, եթէ մի զարմանալի դէպք չը հանէր ինձ այդ դրութիւնից:

Երբ ես աչքերս բաց ու խուփ անելով ննջում էի, յանկարծ զգացի ճրագի կարճատև խաւարումը: Անկասկած այս անակնունելի դէպքը ինձ սթափեցրեց, և ես իսկոյն հետամուտ եղայ այդ յանկարծական դէպքն իմանալու:

Քաջի նման վեր թռայ և աչքերս ճմռմորեղով նայեցի ճրագի բոցին, որ օրօրվում էր: Աչքերս ուղղում եմ ճիշտ բոցի տակը և թնչ եմ տեսնում. մի ինչ-որ սևացած մարմին «ճնջուշտում է»... Իսկոյն կարծեցի, որ դա միջատ պիտի լինի, որ սխալմամբ ճրագի ալիքներին զոհ է գնացել: Սիրտս ցաւեց... անյապաղ վերցրի մի չոփ և նրա ծայրով խեղճ միջատի մարմինը դրի սեղանի վրայ: Քննում եմ նրա մարմնի կազմուածքը, որ ճանաչեմ ինչ միջատ է... Խեղճ կենդանին բոլորովին ալլանդակուել էր, չէր ճանաչվում: Բաւական երկար միջոցից յետոյ հազիւ կարողացայ տեսնել նրա թևիկը, որ խանձուած էր երեք-չորս տեղից: Ինչ ասել կուզէ, որ այդ ալլանդակուած միջատը թիթեռ էր, որը, երևի, կենսատու լոյս կարծելով ճրագի բոցին

կամեցել էր իր կակուղ թևիկներով փաթաթուել, գրգուռել նրա ալիքի հետ. բայց սխալն արդեն մահառիթ էր...

—Վայ, աղի-ջան, մի տեսէ... աստցի արտասոււալից աչքերով և ցոյց տուի խանձուած թիթեռի մարմինը: Մայրս նայեց ինձ և բացագանչեց.

—Երանի՜ իմանայիր թէ ինչ նստատակով այրուեցաւ այդ խեղճ թիթեռը:

—Մի՞թէ դրա վրայ մի բան ասում են:

—Ի՛նչպէս չէ...

—Վայ, մայրիկ, ասա՛, ասա՛, ես կը լսեմ:

Հէնց այդ խօսակցութեան միջոցին մի ուրիշ սպիտակաուռն թիթեռ նազիկ թռթռալով մօտեցաւ ճրագին: Մի քանի անգամ խորամանկութիւնով պտտեց մոմի շուրջը, կարծես մի բան ուզում էր գողանալ նրանից: Նա հերոսի նման յանկարծական անցաւ բոցի միջով: Երբ երրորդ անգամն անցնում էր ճրագի բոցով, այրուեց նրա թևիկի կէսը. թիթեռը ծանրութեամբ ընկաւ գետնին: Կարճ միջոցից յետոյ նա ոյժը հաւաքած կրկին յարձակուեցաւ ճրագի բոցի վրայ և, կարծես, թևով կամենում էր բոց շալակել. բոցը վառուեց նրա թևից: Թիթեռը թևը վառուած՝ շտապ-շտապ թռթռալով հեռանում էր ճրագից, բայց երկար չը շարունակուեց նրա թռչելը. բոցն այրեց նրա առողջ թևն էլ, և նա մղկտալով փռուեցաւ գետնին... Սիրտս կըսկըծաց. մօտեցայ թիթեռին, վերցրի ձեռիս վրայ և լըցուած աչքերով դիտում էի նրա ողորմելի շարժումները: Կամենում էի մի ճար գտնել նրա խանձուած մարմինը բժշկելու...

—Թո՛ղ, որդիս, թո՛ղ... մի՛ չարչարիլ դրան. այդ դեռ բոլորը չէ, ասաց մայրս:

Ես հնազանդուեցի. թողեցի թիթեռին իրան տեղը

և հեռացայ: Անհամբեր սպասում էի այդ ողբերգութեան վերջին...

Կիսով չափ այրուած թիթեռը մի ակնթարթում վեր թռաւ տեղից և վերջին անգամ յարձակուեց ճրագի վրայ: Այս անգամ էլ ոյժ չը կար նրանում... Նա կիսախորով մնաց բոցի վրայ, որից առաջացաւ յանկարծական խաւարումն: Իսկոյն հասկացայ, որ նախկին հերոս թիթեռն էր, որ քիչ առաջ առաջացրեց խաւարումն: Սիրտս չը համբերեց... փչեցի և հանգցրի ճրագը: Մատներս այրելով—նրա մարմինը սաստիկ տաքացել էր—այդ թիթեռի մարմինը դրի միւս մօտ և անթարթ աչքերով դիտում էի նրա բոլորովին ոչնչացած բողկուկները, կուչ եկած աչքերը, խանձուած թևերը, ալյանդափուած և «դքուած» մարմինը. գուցէ ես լաց լինէի, եթէ մայրս չ'ասէր.

—Ո՛րքան օրինակելի հերոսութիւն...

Ես չը կարողացայ ոչինչ ասել:

Ք.

«Գու գիտես, սիրելի որդի, որ ամեն շնչաւոր մեծ մայր է ունեցել: Այդպէս էլ բոլոր թիթեռները մի մեծ մայր են ունեցել և նրանից իրանց ծագումն առել: Երկար ժամանակ թիթեռները վայելել են իրանց մեծ մօր հետ անդորր և նախանձելի կեանք: Նրանք ամենապատուական հիւթերով են կերակրել իրանց մօրը: Ուրախութիւնը տեղողական չէ. այդպէս էլ պատահում է թիթեռներին: Մրջիւնները սաստիկ զայրանալով թիթեռների այն վարմունքի համար, որ նրանք բոյսերի վերին մասերի քաղցրութիւնն են վայելում, սաստիկ կըռիւ են բաց անում նրանց հետ: Սրանց պատերազմը

երկար է տևում և երկու կողմից էլ բաւականին մեռնողներ են լինում: Յաղթութիւնն ոչ մէկի կողմը չէ մնում, թէև թիթեռները շատ քիչ են լինում մրջիններից: Սրանք տեսնելով որ ահագին վնաս կրեցին թիթեռների հետ կռուելով, մտադրվում են խորամանկութիւնով վնաս հասցնել նրանց մօրը...

Մի անգամ, երբ թիթեռները գնում են դաշտը, խորամանկ մրջինները գաղտուկ մտնում են նրանց բնակատեղին: Նրանք թիթեռների մեծ մօրը քնած են գտնում: Շտապով շալակում են նրան և փախցնում դէպի իրանց ստորերկրեայ բները:

Մրջինների միաքն այն է լինում, որ թիթեռներին բոլորովին ոչնչացնեն, որպէս զի իրանք վայելեն բոյսերի թարմ հիւթերը: Նրանք տեսան, որ փախցնելով նրանց մօրը՝ անասելի տխրութիւն պատճառեցին թիթեռներին, բայց չը կարողացան նրանց արգելել բոյսերի քաղցրութիւնները վայելելու: Ուստի և յայտնեցին թիթեռներին, որ նրանց սիրելի մայրը գերի է իրանց մօտ, և որպէս զի յետ ստանան նրան, լաւ կանեն բոլորովին ձեռը չը տան բոյսերի վերին մասերին:

Թիթեռներն ամենայն ուրախութիւնով ընդունեցին այդ պայմանը. նրանք լաւ համարեցին քաղցից մեռնել, քան թէ իրանց մօրը գերի թողնել: Մրջինները խոստացան նրանց երեք օրից յետոյ վերագարձնել իրանց մօրը: Թիթեռները երեք օր քաղցած մնացին, բայց մրջինները խաբեցին, չը կատարեցին իրանց խոստումը: Թիթեռները սաստիկ զայրացան այս խաբեբայութեան վրայ: Մեծ կռիւ բացուեցաւ մրջինների և թիթեռների մէջ, որից բաւական վնաս կրեցին մրջինները, այն ինչ թիթեռներն իրանց վրէժն առան, բայց անկարող եղան ազատել իրանց մօրը գերութիւնից, որով-

հետև մրջինների բները մեծ արգելք եղան իրանց փոքրութիւնով:

Անցան տարիներ: Թիթեռները հանգիստ չէին թողում մրջիններին և շարունակ վնասներ էին տալիս նրանց: Մրջինները վերջը տեսնելով, որ թիթեռները աւելի վնաս են հասցնում իրանց, քան թէ իրանք նրանց, օգնութիւն կանչեցին բոլոր միջատներին, որոնք խիստ շուտով ընկերացան, որովհետև բոլորն էլ նախանձում էին թիթեռների վրայ, որոնք «առօք-փառօք» թռթռում էին իրանց վերևը քաղցրիկ հիւթերը վայելելով:

Մեծ խորհուրդ եղաւ մրջինների և բոլոր միջատների մէջ: Որովհետև սրանք շատ լաւ գիտէին, որ թիթեռներն իրանց մօրը գերութիւնից ազատելու համար «մահն աչքի տակ» ունին, միւս օրն այդ պայմանն առաջարկեցին թիթեռներին՝ որ եթէ նրանցից մէկը կը կարողանայ իրակի բոց կամ կալձ բերել իրանց բոյնը, կը վերագարձեն իրանց մօրը... Թիթեռները այս պայմանը ընդունեցին... «մօր սէրը» ամեն դժուարութիւն մոռացնել տուաւ...

Ահա ինչու, որդեակ, թիթեռները տանջվում են, զոհվում են, որ կրակի բոց տանելով ազատեն իրանց գերի մօրը: Եթէ մենք կարողանանք համարել աշխահիս երեսին իրանց մօր համար զոհուած թիթեռների թիւը՝ կը սարսափենք, բայց նրանք բոլորովին չեն քջանում, ընդհակառակն աւելի և աւելի են բազմանում, որ իրանցից գոնէ մէկը կարողանայ կատարել այդ տաժանելի պայմանը պաշտելի մօրը գերութիւնից ազատելու համար... Դու ինքդ աչքովդ տեսար, թէ որպիսի սարսափելի տանջանքներով զոհուեցան այդ երկու թիթեռ... Եւ այս վեհութիւնը գտնվում է, մինչև անգամ, այդ անլեզու արարածների մէջ»...

ԵՐԿԱԹՈՒՂԻ



նցնում է մեծ սարերի
Արանքով և ձորերով,
Ինչպէս փոքրիկ մի թռչուն
Թռչէ օդը ճեղքելով:

Թանձր ծուխը բարդ ի բարդ
Գուրս է թափվում շարունակ.
Նա գոռգոռում, գոչում է
Իբրև գազան համարձակ:

Քսան ու հինգ ծանրաքարշ
Սենեակ իրար հետ կապած՝
Արագութեամբ տանում է
Բուռն գոլորշին շղթայած:

Մարդիկ նստած բազմաթիւ
Սենեակներում փառաւոր,
Մի րոպէում անցնում են
Շատ անտառներ, լեռ ու ձոր:

Քաղաքներից դէպ քաղաք
Մարդիկ, ապրանք է տանում,
Եւ ցրուելով դէս ու դէն՝
Ուրիշներին է բերում:

Հէնց հասնում է մի քաղաք
Նա սուլում է ծփալով,
Կայարանում բերածը
Իջեցնում է խրոխ տալով:



ԿԵԱՆՔԻ ԿԱԹԻԼԸ



ի խեղճ տղայի հայրն ու մայրը հիւանդացան: Խեղճը չէր իմանում ինչպէս օգնէ նրանց և յուսահատվում էր:

Մի անգամ մի անյայտ մարդ ասաց նրան.

—Մի այլ կայ, որի կամարի ճեղքից ամեն տարի, յայտնի օրերում, երևում է կաթիլ, հրաշագործ և կենսատու ջրի կաթիլ, և ո՛վ այդ կաթիլը կ'ըմպի, նա ո՛չ թէ կը բժշկուի մարմնական տկարութիւնից, այլ և զանազան հոգեկան ախտերից:

Շատ գնաց, թէ քիչ գնաց, այդ յայտնի չէ, միայն նա գտաւ յիշուած այրը և մտաւ ներս: Սա մի քարայր էր, որ ծածկուած էր քարեայ ճեղքոտուած կամարով:

Խեղճ տղան քարայրի մէջ ողջ մարմնով սարսուռ զգաց, «դեղնակոթեց», երբ յանկարծ տեսաւ իր շուրջը բազմաթիւ սողուններ ամեն տեսակից: Նրանք զարհուրելի և զարշէլի արարածներ էին, որոնց աչերից չարութիւն և վրէժխնդրութիւն էր ցայտում... Սակայն նա թնչ կարող էր անել. խեղճը ձայնը փորը ձգած՝ սկսեց սպասել. և երկար սպասեց: Վերջապէս տեսնում է կամարի վրայ երևում է մի ինչ-որ թաց, մի ինչ-որ փայլող խժային հիւթ և ահա քիչ-քիչ ծլծլալով կազմըվում է կամարի վրայ կաթիլ. նա յստակ է, ինչպէս վճիտ արցունքը: Թվում էր թէ նա ահա կը մեծանայ— կը լցուի և կ'ընկնի գետնին: Բայց հէնց երևաց կաթիլը, անմիջապէս բոլոր սողունները ձգուեցին դէպի նա և բացին իրանց թունալի բերանները: Սակայն այն ջինջ կաթիլը, որ պատրաստ էր կաթելու, յանկարծ իրան-իրան յետ քաշուեց... կրկին անյայտացաւ:

Խեղճ տղային մնում էր սպասել և դարձեալ ըս-
պասել:

Եւ յանկարծ օձերը սլլալով նրա շուրջը, ձգուեցին
դէպի վեր, սողուններն էլ բացին իրանց զգուելի բե-
րանները: Տղան սաստիկ վախեցաւ, նրա ռանգ-մուսնը
թռաւ: «Ահա, ահա, մտածում էր նա, բոլոր այս կեն-
դանիները կը յարձակուեն ինձ վրայ, կը ցցեն խալթոց-
ները մարմնիս մէջ և ողջ-ողջ կը խեղդեն»: Սակայն նա
յաղթահարելով իր վախկոտութեանը, ինքն էլ ձգուեց
դէպի վեր. և ո՛հ, հրաշք, կենսատու ջրի կաթիլը կա-
թեց իր բացած բերանի մէջ: Սողունները շչացին, շրվ-
շրվացրին, սակայն իսկույն և եթ յետ քաշուեցին նրա-
նից, ա՛յն բախտաւոր տղայից: Եւ միայն չար աչքերը
նախանձով նայում էին նրա վրայ...

Տղան գուր չը կուլ տուեց այդ կաթիլը: Նա ըս-
կրտեց հասկանալ այն բոլորը, ինչ որ մատչելի է մարդ-
կային հասկացողութեանը. նա թափանցեց մարդկային
կազմուածքի գաղտնիքի մէջ, և ո՛չ թէ միայն բժշկեց
իր ծնողներին, այլ և սկսեց զօրանալ ու հարստանալ,
և նրա փառքի համբաւը սլացաւ հեռու և հեռու...

1884

ՏԱՆՈՒ ԳՈՂ

Ա.



Արածճի Ռուբէնը շատ քաղցրասէր էր: Նրա
մայրը թէև մրգեղէններն ամուր կօղպած
սնդուկների մէջ էր պահում, բայց նա այնպիսի խո-
րամանկութիւնով բաց էր անում նրանց, որ մայրը մը-
նում էր զարմացած: Ամեն տեսակ փական մի հասարակ
երկաթի կեռ ծայրով հմտութիւնով բացում էր և սըն-
դուկի քաղցրեղէնները վայելում: Շատ անգամ, ի հարկէ,
մայրը վրայ էր հասնում և մի լաւ թակելով, կամ
«անէծքաչոր» անելով, դուրս գցում տանից: Ծեծում էին
սաստիկ, մայրը ջոկ, պառաւ նանը ջոկ, բայց ոչ ոք
չէր կարողանում նրան այդ ճանապարհից յետ կանգ-
նեցնել: Պէտք է այս էլ ասած, որ մայրը—գլխաւորա-
պէս նանը—իրանց անխիղճ ծեծերի հետքերը թողել
էին նրա ճակատի և մատների վրայ. այդ հետքերը
փոքրիկ սպիներ էին: Նրանք տեսնում էին, որ ձեռ-
քով թակելով չեն կարողանում «թարի անել» տալ նրա
գողութիւնները, փայտով էին ծեծում և քիթ-պուռնդ
«արիւնլուայ» անում: Մայրը միշտ յետոյ փոշմանում
էր և զգուշութիւնով փաթաթելով արիւնոտ վերքը՝
նստեցնում էր իր գոգում և սփոփելով ասում.

— Քո մօր աչքերը կուրանայ, ձեռները չօրանայ,
բալա-ջան, սուս կաց. ի՛նչ անեմ, բարկացած էր սիրտս,
չը համբերեցի... Դու էլ խելօք կաց էլի, ի՛նչ ես սիր-
տըս տեղահան անում: Զե՛ռք չես վեր առնիլ այդ գո-
ղութիւններից, և ուրիշ խօսքեր չը գտնելով, պինդ գրկում
էր և մրգեր տալով խաբում էր ու լռեցնում: Բայց անց-

նում էր մի-երկու օր թէ չէ՝ Ռուբէնը էլի սկսում էր իր գողութիւնները, իսկ մայրը տեսնելով, էլ չէր համբերում, ծեծում էր անխնայ և յետոյ կրկին փոշմանում...

Վերջը տեսնելով որ նրա «հախիցը» չեն կարողանում գալ և ծեծեց երբեմն Ռուբէնը հիւանդանում է, մի օրէնք դրին նրա համար. այն է՝ միշտ քաղցրեղէն ուտեցնեն Ռուբէնին, որ այլ ևս գողութիւն չ'անի: Բայց այս էլ անյաջող անցաւ, որովհետեւ այնքան միրգ չէին տալիս, որ նա կշտանար. տուած էլ միայն ախորժակն էր բացում, ուրիշ ոչինչ...

Ռուբէնը դարձեալ իր սովորութեան փեշից բռնեց:

Նրա ծնողները կարծելով այս բանը սուրբ-Սարգսից է, ուխտ դրին՝ ամեն տարի նրա տօնին այնտեղ գնալ, մատաղ անել, որպէս զի խաչն իրանց որդուն ծուռ ճանապարհից հանի: Այդպէս էլ արին: Երեք տարի չարածճին խաչ էր գնում, քէֆ անում իրան համար, բայց դարձեալ ոչինչ չը դուրս եկաւ, նա մնաց նոյնը, նոյն «տանու գողը»...

Բ.

Մի անգամ էլ Ռուբէնը տուն մտնելով, ըստ իր սովորութեան, սնդուկը բացեց և ընկուզի «շիջողներ» — չուշխեւ հանելով այնքան կերաւ, որ զզուեց: Նանը վրահասաւ: Նա մի քանի անգամ Ռուբէնի վրայ ծղրտաց, մի քանի անգամ էլ «բամփեց» գլխին և յետոյ, որպէս պատիժ, հրելով ձգեց նկուղը: Այդտեղ բաւականին մութն էր, բայց յետոյ Ռուբէնի աչքերն ընտելանալով մթութեանը, կարողացաւ աչքի առնել իր շըրջակայքը: Նա տեսաւ, որ սուստաղից մի քանի երկար փայտի վրայով կախած են «բանդաղներ» — կախաններ: Իսկոյն մի միտք յղացաւ նրա գլխում: Չորս ժամից ա-

ւելի կը լինէր, ինչ նա նկուղումն էր: Ռուբէնը բաւականին քաղցել էր. հարկաւ մի բան պէտք է գտնէր ուտելու... Եւ ահա խաղողի, խնձորի և տանձի բանդաղները հրապուրում են նրան...

— Բայց մթ է նանը չէր իմանում, որ այստեղ բանդաղներ կան և չեն կարող ազատուել իմ ձեռից, հարցեց ինքն իրան Ռուբէնը:

Պատի վրայ «ոտնատեղեր» կային. Ռուբէնը սկսեց այդ ոտնատեղերով վեր բարձրանալ: Թէև նա սկզբում «սլկհաց», վայր ընկաւ, բայց յետոյ կամաց-կամաց ոտներն ամրացնելով՝ հասաւ բանդաղներին: Զեռքը մեկնեց խաղողի բանդաղին և բռնեց ամենածայրի ճիւղից: Բայց նրա բաղդից ճիւղը — ողկոյզը պինդ լինելով չէր պոկվում: Սկսեց ամուր քարշել: Շըրքմփ... Թափուեց գետնին բանդաղների շարքը: Ռուբէնը բոլոր մարմնով սոսկաց: Տեսնում է առաջը տասն-քսան խաղողի բանդաղներ «ջուր են դառել», ոչնչացել բարձրից ընկնելով. խնձորի, տանձի բանդաղներն էլ սաստիկ հասուն լինելով՝ նոյնպէս ջարդուել ու փչացել էին: Ինչ կարող էր անել խեղճը — ոչինչ: Եւ Ռուբէնը վիզը ծռած, «խեղճ-խեղճ» նայելով արածի վրայ, սկսեց մի աղիողորմ լաց: Այնպէս «աղի-աղի» լաց էր լինում, որ լսողի սիրտը կտոր-կտոր կը լինէր... Լալիս էր և բարձր ձայնով «ամի՛, ազի՛» կանչում. իսկ նանիի անունը չէր տալիս, որովհետեւ եթէ նա իմանար, իրան «սաղ-սաղ» գետնումը կը դնէր... Լալիս էր Ռուբէնը և զարհուրած նայում ջուր դառած բանդաղների վրայ: Սաստիկ սարսափից նրա սիրտն ուղում էր միջից ճաքի... Խեղճն այնքան լաց եղաւ, որ ձայնն էլ կտրուեց, արտասուքն էլ ցամաքեց: Վերջապէս վհատուած սրտով ընկաւ գետնին և այնպէս թմրած մնաց...

Գ.

Նկեղեցիների զանգակները ղողանջում էին, երբ նա սթափուեց: Ռուբենը գլուխը բարձրացրեց և ըսկրսեց ապուշ-ապուշ նայել գետնին փռուած բանդաղներին վրայ, որ նրանց ձմեռուայ քաղցրեղէնն էր, սակայն նա փչացրել էր մի ըողէում:

Մթնել էր, ոչինչ չէր երևում մթին նկուղում: Յանկարծ միւս սենեակում Ռուբենի մօր ձայնը լսուեց, որ բարկացած ասում էր.

— Ի՞նչ անեմ ես այդ անխիղճ պառաւի ձեռիցը, որ չի ուզում խեղճ Ռուբենիս հանել մթին նկուղից: Նա գալիս էր նկուղը մի ճրագ ձեռին: Ռուբենը թէև մի փոքր սրտապնդուեց լսելով մօր խօսքերը, բայց ինքն էլ մեղաւոր ճանաչելով նանիին՝ սկսեց դառնալէս լաց լինել, որ դրանով իր գանգաւը յայտնի մօրը: Դուռը բացուեց թէ չէ, նրա սիրտը չը համբերեց, հեծկլտալով ընկաւ մօր ծնկներով:

— Ի՞նչ է, Ռուբեն-ջան, ինչո՞ւ ես լալիս, հարցնում էր մայրն անդադար:

Բայց Ռուբենը մի խօսք չէր կարողանում ասել. նրա լեզուն բոլորովին կապուել էր... Այնպէս էր հեկեկում, հեծկլտում, որ մարդի մազերը «բիզ-բիզ» էին կանգնում...

Տեսաւ մայրը բոլորը և հասկացաւ:

— Ոչինչ չը կայ, Ռուբեն-ջան, դու հո՞ւ չես մեղաւորը, բոլորի պատճառն այն անհոգի պառաւն է, դու մի լար:

Տեսնելով որ լաց լինելը չի կտրում, Ռուբենին գրկելով շարունակեց.

— Այդքան լաց կը լինի՞ն, Ռուբեն. աչքերդ ուռել, կարմրել «տակ» են դարձել. ռանդ-մռանդդ թռել

է, բալա-ջան, սուս կաց, մի լար... Քո մօր ոտը պէտք է կոտրուէր, որ այսօր տանից դուրս չէր եկել... Արի խտտեմ, տանեմ տուն. տատունց տանիցը քեզ համար լաւ-լաւ «գատեր» եմ բերել... Սո՛ւս, Ռուբեն-ջան, սո՛ւս կաց: Բայց Ռուբենը չէր կարողանում սուս կենալ: Մօր խօսքերն աւելի և աւելի էին ներգործում նրա վրայ և նա հեծկլտում էր անդադար...

— Արի, որդի-ջան, խտտեմ, աղաչում էր մայրը, էլ լաց մի լինիր, ի՞նչ ասեմ քեզ այստեղ գցողին, որ սիրտս հովանայ... Բոլորը նա է արել, դու մեղաւոր չես: Դէ մի լար, Ռուբեն-ջան, բաւական է: «Չարդ տանի» քո մայրը...

Դարձեալ Ռուբենը չէր կարողանում իր լացը պահել: Խեղճն իր կեանքումն այդքան սասաիկ լաց չէր եղած... նրա սրտի թելերը թուլացել էին...

Այդ գիշերուանից Ռուբենը սաստիկ հիւանդացաւ և բաւականին երկար ժամանակ մնաց անկողնի մէջ:

Չը գիտեմ ինչո՞ւ, բայց նա առողջանալուց լետոյ սաստիկ զգուանքով էր նայում բոլոր քաղցրեղէնների վրայ...

1883

ԱՐՇԱԿ ՄԵՀՐԱԲԵԱՆ—ՍՐԻՆԳ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
I. Մանկական մաղթանք	3 « »
II. Գողոթեան հետեանք	5 « »
III. Քամի (բանաստեղծութիւն)	7 « »
IV. Մարդը (հին զրոյց)	9 « »
V. Որբ	14 « »
VI. Հպարտ բոյսը	17 « »
VII. Սշնան տերև (ոտանաւոր)	21 « »
VIII. Ոսկի և կրակ	23 » »
IX. Ծիծեռնակ (բանաստեղծութիւն)	29 « »
X. Թիթեռներ (աւանդութիւն)	31 « »
XI. Երկաթուղի	36 « »
XII. Կեանքի կաթիլը (Տուրգենեվից)	37 « »
XIII. Տանու գող	42 « »

ժ. Երանյան

Գրի

ժ. Կոչեք ռ: 43

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL028219

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL028218

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL028217

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL028216

